

ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին երկու տարիների ընթացքում Գերմանիայում հրատարակվել են հայերին և Հայաստանին առնչվող գրքեր, որոնց մասին ստորև տալիս ենք հակիրճ տեղեկություն:

1. *Շահին Ալի Սոյլենեզոլլու, «Մեղալիոնի մյուս կողմը», 2005թ. Բեռլն, Օնել հրատարակչություն, 254 էջ:*

Հեղինակը, ինչպես ինքն է նշում, փորձել է պարզաբանել 1915թ. ողբերգության պատճառները՝ հիմք ունենալով եվրոպական, ամերիկյան և հայկական աղբյուրները: Գիրքը ամբողջությամբ ողողված է մեզ՝ հայերիս հայտնի խեղաթյուրումներով: Գրքում առկա միակ նորությունը գերմաներենով գրված լինելու վաստն է:

2. *Չեմ Օզգյոնոլ, «Մի ցեղասպանության առասպել. Լեփսիուսի փաստաթղթերի քննական ակնարկ և գերմանացիների դերը «Հայկական հարցի» նկատմամբ անցյալում և ներկայումս», 2006, Օնել հրատարակչություն, 325 էջ:*

Այս գիրքն իր ոգով և բնությով վերը նշված գրքի շարունակությունն է, միակ տարբերությունն այն է, որ գրքի առաջաբանը գրել է ոմն գերմանացի դոկտ. Ուլտ Վիցենզը, ըստ որի «1945-46թթ. վտարել են 15 միլիոն արևելյան գերմանացիներ (Լեհաստանից և Չեխիայից - Ժ.Ը.)՝ շուրջ 2 միլիոն զոհերով, և ոչ ոք չի խոսում ցեղասպանության մասին...», այնուհետև նա համգում է «ցնցող» եզրակացության. «...հայերի վերաբնակեցումն էլ և դրա հետևանքով մահացածներին էլ արդար չի լինի ցեղասպանություն կոչել»: Հետաքրքրաշարժ մի մանրամաս, հեղինակը երևի գրքին առանձնահատուկ կշիռ տալու համար, ինքն իրեն գերմանացի-թուրք պատմաբան է կոչում: Ինչ վերաբերվում է Օնել հրատարակչությանը, սա մի անհայտ թրքական հրատարակչություն է, և բացառված չէ, որ երկու գրքերն էլ Թուրքիայի պետության պատվերներն են:

3. *Ալփերեն Չելքք, «Հայ ժողովրդի ողբերգությունը, 1915-1918», 2006թ., Վուրցբուրգ, 119 էջ:*

Գրքույկի հեղինակը իրավաբանության ուսանող է, իսկ հրատարակչությունը՝ անհայտ: Գիրքը կրկին հենված է փաստերի խեղաթյուրումների վրա և լի է հակասություններով, նախորդ երկուսի նման չի ներկայացնում գիտական արժեք և ավելի շուտ՝ ուղղված է Գերմանիայում բնակվող 2,5 միլիոնից ավելի թուրքերին:

4. *Եորզ Բեռլին և Ադրիան Բլեններ, «Յեղասպանություն թե՞ վերաբնակեցում», 2006թ. Համբուրգ. Փափիոռոսսա հրատարակչություն, 410 էջ:*

Գիրքը՝ իր 5 քարտեզներով, ցեղասպանության մասին լուսանկարներով, հիմնված է համոզիչ փաստերի վրա: Գրքի մասին կարծիք կազմելու համար քարգմանաբար մեջբերենք գրքի շապիկի դարձերեսին առկա ծանուցումը, որը համապատասխանում է գրքի բովանդակությանը. «Էլ ո՞վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին», - ասել է Հիտլերը նախքան Լեհաստանի վրա հարձակվելը, որպեսզի իր զինվորները չունենան խղճի խայթ: Սա նշանակում է, որ որևէ ցեղասպանության մասին եղած յուրաքանչյուր հիշողություն կարող է օգնել, որպեսզի գալիք ցեղասպանությունը խափանվի»: Գրքի առաջին մասում անդրադարձներ են հայոց պատմության և 1915-16թթ. ցեղասպանությանը վերաբերող հարցերին, ինչպես նաև փորձ է արվել տալ ցեղասպանության պատճառների վերլուծությունը: Երկրորդ մասում նյութերը դասավորված են ըստ աղբյուրների: Թուրքական տեքստերի հետ միաժամանակ ներկայացվում է նաև հայ, ամերիկացի և գերմանացի ականատեսների վկայությունները: Այստեղ, մի կողմից նշելով թուրքերի ոճրագործ գործունեությունը, նաև հիշատակվում է նրանց մասին, ովքեր փորձեցին օգնել ցեղասպանության զոհերին: Գրքում բերված օրինակներով ավելի է հստականում Գերմանիայի վարած քաղաքականության պատասխանատվությունը: Գրքում բերված են նաև ժամանակի դիվանագետների քաղաքական գնահատականները: Այս հարցերի մասին փաստաթղթերն առաջին անգամ են հավաքական տպագրվում և արժեքավոր են հատկապես այն ուսումնասիրողների համար, ովքեր զբաղվում են Հայոց ցեղասպանության ընթացքում Գերմանիայի վարած քաղաքականության խնդրով: Այս գրքի մասին արժե անշուշտ երկար խոսել: Այս հրատարակությանը պետք է անդրադառնալ ավելի հանգամանալի ու ծավալուն գրախոսականով (ենթադրվում է, որ մման գրախոսականով մոտ ապագայում հանդես կգա տիկ. դոկտ. Թեսսա Հոֆմանը): Այս դեպքում հարկ է նշել, որ այս հրատարակությունը պատշաճ պատասխան է վերը նշված երեք թուրք հեղինակներին: Ավելացնենք, որ Եորզ Բեռլինի և Ադրիան Բլենների «Յեղասպանություն թե՞ վերաբնակեցում» գիրքն արժանացել է լայն հասարակության և, հատկապես, երիտասարդ ուսումնասիրողների հավանությանը:

5. *Ութն Ֆրիզն և Մարկոս Վուրմլի, «Կովկաս, մշակութային ցնցում», 2006թ., Բիլեֆելդ, Փեթեր Ռուսի հրատարակչություն, 526 էջ:*

Այս գրքի մասին հարկ է խոսել ավելի մանրամասն: Հենց սկզբից նշենք, որ արդարացի են գերմանահայերի և նրանց գերմանացի բարեկամների վրդովմունքը, քանի որ այդ հրատարակությունը լի է բազմաթիվ մտածածին և կեղծ խեղաթյուրումներով:

Մեզ՝ հայերիս, համար սովորական երևույթ է դարձել, որ ոչ իրավասու մարդիկ մեր մասին գրքեր գրեն, անարժեք խորհուրդներով մեզ «խելքի բերեն»: Այնուամենայնիվ այս գիրքը գերազանցում է իր բոլոր նախորդներին: Թե ինչո՞ւ և ի՞նչ պատճառով են հրատարակչությունը և պատասխանատու խմբագիրը ձեռնարկել այս գրքի հրատարակմանը՝ կանդիդատու-նանք ավելի ուշ: Եթե այսպիսի մի գիրք հրատարակվեր հրեաների կամ թուրքերի մասին, հեղինակները պատասխանատվության կկանգնվեին:

Աղբյուրաբանական «երիտասարդ ազգը», որի «հիմ» պատմությանը, հեղինակների վկայության համաձայն, կարելի է ծանոթանալ հատկապես

արցախյան պեղումներից և Գուրխատանի քարայրների ժայռապատկերներից, միակն է, որ արժանացել է հեղինակների սրտացունց բարձր գնահատանքին: Վրացիներն առայժմ վիճում են, թե ինչպե՞ս անվանեն իրենց զարեջուրը և, ըստ Ֆրիզմի և Վուրմլիի, կարիք չկա երկար գրել նրանց պատմության մասին: Վրաստանի պատմությունը սահմանափակվել է միայն մի քանի տողով: Հայերի մասին, սակայն, կարելի է առավել ծավալուն ապատեղեկատվություն տալ:

Եթե բոլոր սխալները, անճշտությունները և վրիպումները հանգամանորեն մեկնաբանվել, կստացվել իր ծավալով ավելի մեծ գիրք, քան այս գրքույկն է, ուրեմն սահմանափակվենք միայն որոշ կետերով:

Ամենից առաջ՝ հայերը չեն պատկանում կովկասյան ժողովուրդներին: Հայերի անունով բարձրավանդակը (Հայկական լեռնաշխարհ) ճշգրիտ սահմանված է և չի գտնվում Կովկասում: Ցեղասպանությունից և Սովետական Ռուսաստանի՝ ի վնաս հայերին թուրքիային արված հողային զիջումներից հետո Սովետները հանրապետություն կոչեցին 29800 քկմ կրճատված Հայաստանը՝ իր շուրջ 800000 բնակիչներով, որի զգալի մասն Արևմտյան Հայաստանի (թուրքերը քաղաքական նպատակով այն Արևելյան Անատոլիա վերանվանեցին) գաղթականներ էին: Եվրոպացի «գիտնականները» թե՛ անցյալում և թե՛ ներկայումս քաղաքական նկատառումներով կրկնում են այս անհեթեթ անվանումը:

Երբ պրոֆ. Բիդլը Երևանում ցանկացել է նախկին սովետահայերին հանդգել, որ սովետական 70 տարիներն ամենափառավորն են եղել հայոց պատմության մեջ, հանդիպել է հայերի հակադրմանը, որն էլ հեզմանքի է ենթարկվում գրքի հեղինակների կողմից: Ըստ իս, նրանք մոտենում են հարցին տարբեր չափանիշներով: Մի՞թե Գերմանիայի դեմոկրատական հանրապետության 40 տարվա սոցիալիզմը Գերմանիայի պատմության ամենաերջանիկ ժամանակահատվածն էր: Ըստ Ֆրիզմի և Վուրմլիի տրամաբանության՝ Գերմանիայի Դաշնային հանրապետության և Գերմանիայի Դեմոկրատական հանրապետության վերամիավորումը պիտի լիներ ոչ թե ազգային հրճվանքի, այլ ազգային ողբերգության օր: Հարց է առաջանում. եթե մի բան վատ ու անընդունելի է գերմանացիների համար, ինչու՞ պիտի լավ ու ընդունելի լինի հայերի համար: Բուլշևիկները մեզ չհարցրեցին, արդյոք մենք ցանկանո՞ւմ ենք ապրել բուլշևիկյան վարչակարգում թե՞ ոչ: Հայաստանում բուլշևիկյան իշխանության հաստատումից հետո հետևողականորեն աքսորվեց և ոչնչացվեց հայ մտավորականությունը: Ով փորձում է ասել, որ սովետական 70 տարիները մեր պատմության ամենափառավոր ժամանակահատվածն է եղել, ուրանում է հայերի զանգվածային աքսորը Միքիթ, բռնի կոլեկտիվացումը, ստալինյան «մաքրագործումները», և, վերջապես, Սովետական Միության վերջնափուլում կասարկված կոտորածները, մասամբ՝ հենց Սովետական բանակի աչքի առջև (Սում-գայիթ, Կիրովաբադ, Բաքու 1988-1990, ինչպես նաև՝ «Օդակ» գործողություն, 1991):

Ավելացնենք՝ նախիջևանահայերը ՍՄԿԿ կենտկոմի աչքի առաջ քշվեցին իրենց հայրենիքից: Գերմանիայում շատ փառաբանված «զլաս-նոստի» և «պերեստրոյկայի» ժամանակաշրջանում քշվեց և կոտորածի ենթարկվեց Ադրբեջանի հայությունը: Այս էր հայոց պատմության նյութապես «ամենաապահով» ժամանակահատվածի պատկերը: Դեռ չենք խոսում Սովետական Հայաստանի և սփյուռքի միջև ստեղծված պատմելի մասին:

Ֆրիզնի և Վուրմլի տեղեկատուները հայոց պատմության մասին ունեցած գիտելիքներով չեն գիշում հեղինակներին. որպես ապացույց բերենք մի քանի օրինակներ.

• «...Ուրարտացիները սակայն Հայաստանի առաջին վերաբնակիչները չէին...» և «...Նրանց հազիվ թե կարելի է հայ կոչել...»:

Ուրարտուի մայրաքաղաքը Տոսպ քաղաքն էր՝ Վանա լճի ափին, ուրեմն այսօրվա Վան քաղաքը գտնվում էր Արևմտյան Հայաստանում և ոչ թե այսօրվա Հայաստանի տարածքում: Ի՞նչ չափանիշով է չափվել ուրարտացիների հայ լինելը: Իրականությունն այն է, որ ուրարտացիները մասնակից են եղել հայ ժողովրդի կազմավորմանը:

• Ինչո՞ւ պիտի Հայաստանի կառավարությունը Էրեբունի ամրոցի պեղումները կասեցնի և կոնկրետ ի՞նչն է գաղտնի պահվում: Ֆրիզնի և Վուրմլի տողատակերից կարելի է հասկանալ, որ Հայաստանի կառավարությունը հավանաբար վախենում է թրքական սեպագրերի հայտնաբերումից: Մենք լարված սպասում ենք գալիք վերահրատարակությունների նորանոր «մերկացումներին»:

• Թեպետև Մովսես Խորենացին հայոց պատմահայրն է, սակայն նա հայոց առաջին պատմագիրը չէ: Նրանից առաջ եղել են Ջենոբ Գլսկը, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Կորյունը և Եղիշեն: Իրապես Մովսես Խորենացին ծնվել է 410թ. և մահացել 5-րդ դարի վերջերին: Նրանից հետո եկող պատմաբանները շարունակել են նրա երկը և լրացրել պատմական իրադարձությունները: Սա արդեն հայագիտության մեջ ապացուցված փաստ է՝ հիմք ունենալով լեզվական զարգացումներն ու ոճային վերլուծումները: Արևմտյան գիտնականները, սակայն, որոնք ոչ գրաբարի մասնագետ են, ո՛չ էլ ոճաբանության, նրա ստեղծագործությունը համարում են հետագա դարերի աշխատանք՝ հետալուծելով քաղաքական նպատակներ: Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» համարում են հնարածին, որպեսզի հիմնավորեն հետևյալը. եթե չի եղել հայ պատմագրություն, չի եղել նաև հայ ազգ, հետևաբար նաև՝ հայկական պետականություն, եղել են միայն առանձին հայկական համայնքներ: Հիրավի Մովսես Խորենացին հայոց պատմահայրն է, քանի որ նրա պատմական նկարագրումները թվագրված են (մի բան, որ այն ժամանակ դեռևս ընդունված չէր) և որ ամենակարևորն է, նա քննադատաբար էր մոտենում աղբյուրներին, ոչ միայն արտագրում, այլ ուսումնասիրում ու հետազոտում էր դրանք:

• Տիգրան Մեծը հիրավի արժանի էր իր տիտղոսին, քանի որ կարողացավ հայերով բնակեցված բոլոր տարածքները միավորել մի պետության մեջ: Քաղաքական տեսանկյունից դիտած նա նաև խելացի իշխանավոր էր, քանի որ չլրկնեց իր կնոջ հոր՝ Միհրդատ VI Եվպատորի սխալը, որը պատերազմ մղեց գերուժ Հռոմեական կայսրության (Imperium Romanum) դեմ՝ կործանելով սեփական երկիրը, այլ համաձայնության եկավ նրանց հետ:

• Հիտլերի՝ 1939թ. օգոստոսի 22-ի Հայոց ցեղասպանության մասին մեջբերումը ևս խեղաթյուրված է: Չնայած բնագիրը գերմաներեն է, հեղինակներն իրենց նեղություն չեն տվել ուսումնասիրել այն. ոչ թե «ո՞վ է խոսում այսօր հայերի մասին» այլ՝ «ո՞վ է խոսում այսօր հայերի բնաջնջման մասին» և շարժառիթը ոչ թե հրեաների ողջակիզումն էր, այլ նախատեսված հարձակումը Լեհաստանի վրա և սլավոնական ազգերի բնաջնջումը

(տե՛ս Գերմ. արտաքին գործոց քաղաքականության փաստաթղթեր 1919-1945, D սերիա, VII, No 195, էջ 171, նշում 1):

• Հեղինակները Հայոց ցեղասպանության կապակցությամբ գրում են. «...թրքական Անատոլիայում ապրող հայերը...»: Սակայն իրականում ճիշտ հակառակն էր. մենք միշտ ապրել ենք մեր հայրենիքում, իսկ թուրքերը ներխուժել են Հայաստան: Հեղինակները մոռանում են այս իրողությունը:

• Մի ժողովուրդ, որ տառապել է ցեղասպանությունից, մյուս ժողովուրդների համակամության կարիքն ունի: Սակայն ո՛չ հեղինակների կողմից այսքան զովերզված Սովետական Միությունը և ո՛չ էլ Գերմանիան իր 2005թ. հունիսի 16-ի բանաձևով որոշակիորեն չճանաչեցին Հայոց ցեղասպանությունը: Հեղինակները պնդում են. «...շատ օգնություն է հասել Կովկաս...», բայց ո՞ր, ո՞ր երկիր, պատասխանը խիստ անորոշ է՝ «Կովկաս»:

• Ֆրիզը և Վուրմլին բնավ ժլատ չեն բնադատելու և խորհուրդներ չտալելու մեջ: Խորհուրդ են տալիս հայացքն ուղղել դեպի ապագան, «...քանի որ դեպի անցյալ ուղղված հարատև հայացքն արգելակում է հայ ժողովրդի շարժումը դեպի առաջ»: Հարկավ մենք հասկանում ենք, որ գերմանական հասարակությունը խանգարված հարաբերություն ունի իր անցյալի նկատմամբ: Դժուրին չէ հետադարձ հայացք նետել դեպի միլիոնավոր գոհերը: Այս նկատի առնելով է, որ Դաշնային հանրապետության ներկայիս լրատվամիջոցները գերմանական բացասական տրամադրության հիմնական պատճառը տեսնում են սեփական դժմի անցյալի հետ չառնչվելու ցանկության մեջ: Ֆրիզը և Վուրմլին, հաճախ արտասահմանում գտնվելով, պետք է որ իմանան, որ մարդկության մեծամասնությունը գերմանացիների նման չունի խանգարված հարաբերություն սեփական անցյալի նկատմամբ: Ո՛չ հայերը, ո՛չ էլ հրեաները սևեռում մտապատկերներով չեն նայում անցյալին, այլ փորձում են դասեր քաղել անցյալից: Ցեղասպանության գոհը եթե այդպես չվարվի, դարձյալ դառնալու է ցեղասպանության գոհ: Անցյալը հաղթահարելու և ներել կարողանալու համար հարկ է ոճրագործների սերունդների օժանդակությունը: Սակայն թրքական իշխանությունները 91 տարի է ուրանում են հայկական ցեղասպանությունը: Այն թուրքերը, որոնք պատմական իրողությունները հրապարակավ ճանաչել են, մեղադրվել են ազգայնամոլ իրավաբանների կողմից և դատապարտվել: Թուրքերը մահ զինվորական, քաղաքական և տնտեսական հովանավորություն են ցուցաբերում արյունակից ադրբեջանցիներին: Արցախյան ազատագրական պատերազմի ողջ ընթացքում Թուրքիան Ադրբեջանում պահում էր այսպես կոչված թոշակի անցած սպաներ և զինվորական խորհրդատուներ: 1993թ. սկսած Թուրքիան օժանդակում է Ադրբեջանին իրականացնել տնտեսական և տրանսպորտային շրջափակում: Դիվանագիտական հարաբերություններ սկսելու համար Հայաստանի հանրապետության դեմ որոշակի պայմաններ է դրվում՝ հրաժարվել պահանջատիրությունից, Հայաստանի հանրապետության զորքը հեռացնել Արցախից, ինչպես նաև՝ «խելքի բերել» սփյուռքահայերին:

• Այսօր միայն 45000 հայեր են ապրում Թուրքիայում, հիմնականում՝ Կ. Պոլսում: Նրանք կազմում են ահաբեկված փոքրամասնություն, ճիշտ հակառակը Գերմանիայում բնակվող թուրքերի: Վերջիններս՝ Գերմանիայում ծնված և հասակ առած սերունդը, այս էլ երկրորդ տարին է

ծաղկեպսակներ է դնում Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատու Թալեաթ փաշայի ահաբեկության վայրում և պահանջում 1921թ. Բեռլինում արձակված դատավճռի բեկանում, ինչպես նաև՝ փողոցների և հրապարակների վերանվանում ի պատիվ Թալեաթի: Մի՞թե այս բոլորը պետք է անտեսենք և «ապագային մայենք»:

Ֆրիգդը և Վուրմլին հայոց լեզուն որակում են որպես «ֆշոց» և «շշոց»: Այնուամենայնիվ պետք է նրանց հուսախաբ անեն: Հայերենը «շշացող» և «ֆշացող» որակավորելու համար որպես օրինակ բերված բառերի կեսը չի պատկանում հայերենին, մյուսների արտասանությունն էլ դժվար է գերմանացիների համար, քանի որ գերմաներենը չունի համապատասխան բաղաձայններ»:

Հեղինակների կարծիքով հայոց լեզուն ունի աղքատ բառապաշար, հայերը չեն տիրապետում իրենց մայրենի լեզվին, իսկ Հայաստանի դասախոսներն ու ուսուցիչներն ունեն մակերեսային գիտելիքներ: Այս հետևության նրանք հանգել են այն բանից հետո, երբ Սևանա լճի ափի գյուղերից մեկում մի աշակերտուհի չի իմացել, թե իրենց գյուղի ճահճի գորտը ո՞ր տեսակին է պատկանում:

• Արցախի թեմայի մասին խոսելիս Ֆրիգդը և Վուրմլին դարձյալ հենվում են ուրիշի կարծիքների վրա, այս անգամ խոսելով Սաադեթի և Հայկի անուններից, որոնց իսկությունը թերևս վիճելի է: Ոչ մի խոսք ժողովրդավարության, ազգերի ինքնորոշման և կամ ժողովուրդների իրավունքների մասին, հակառակը՝ հարկ եղած դեպքում մեջտեղ է գալիս կեղծիքը: Որպես օրինակ բերենք հետևյալ հատվածը. «...Ադրբեջանի նախագահ Ալիևը պաշտոնապես ներողություն է խնդրել: Սպանության հարցում ադրբեջանցի սպան որևէ հրահանգ չի ունեցել: Նրա արարքը դատապարտելի է...»: Խոսքը գնում է հայ սպայի դեմ կատարված դաժան, կանխամտածված սպանության մասին, երբ 2004թ. փետրվարին, Բուդապեշտում, NATO-ի կազմակերպած «Ընկերակցություն խաղաղության համար» ծրագրի շրջանակում մի ադրբեջանցի սպա կացնով գլխատել էր քնած հայ սպային և հարձակվել երկրորդի վրա: Այս պահին ոճրագործը Բուդապեշտում դատապարտվել է բարձրագույն պատժի: Ո՛չ Ադրբեջանի նախագահը և ո՛չ էլ որևէ այլ ադրբեջանցի ներողություն չի խնդրել կատարված ոճրի համար, դեռ հակառակը, մարդասպան Ռամիլ Սաֆարովը մեծարվել է որպես ազգային հերոս նաև իմտերմետային կայքերում: Նույնիսկ՝ քաղաքացիական մի հանգանակությամբ հավաքվել է դրամ՝ նրա և նրա ընտանիքի համար: Ադրբեջանի կողմից զոջումի ոչ մի խոսք չի եղել նաև մախիջև-մահայերի բռնազաղթի, կողոպուտի և սպանության համար: Նրանք էլ ավելի հետևողականորեն են ավիրում հայկական հուշակոթողները, հատկապես՝ Ջուդայի իր տեսակի մեջ եզակի խաչքարերը:

• Անդրադառնա՞նք «Հայկականություն-արիականություն» հարցին: Այսօրվա Հայաստանի Ժողովրդի ճանաչողության հարցում ի՞նչ կարևորություն կարող է ունենալ 1934թ. գերմանա-հայկական ընկերության կողմից հրատարակվածը: Թե՛ գերմանա-հայկական և թե՛ գերմանա-թրքական ընկերությունները ստեղծվել են 1914թ., պատերազմի սկզբից անմիջապես առաջ: Ֆրիգդի և Վուրմլիի հիշատակած տպագրությունը փորձ էր՝ փրկելու գերմանական տիրապետության սահմաններում գտնվող հայերին սեմիթականության մեջ մեղադրվելու մահացու վտանգից: Այս տպագրությունն առաջին հերթին պարզաբանում է տիրող իրավիճակը ֆաշիստական Գեր-

մանհայտում: Ֆրիզը և Վուրմլին չեն դատապարտում նացիոնալիստների դժնությունը, կիրառված մահաբեր ցեղային ուսմունքը, այլ պարսավում են հայերին՝ որպես անտիսեմիստներ: «Հայաստանում տիրում է ուժեղ հակասեմիթականություն, թեպետև երկու երկրների պատմություններն իրար շատ մման են»: Նման են արդյո՞ք իսրայելական և հայկական պատմությունները, թողնենք պատմաբաններին, սակայն փաստ է, որ Երևանի կենտրոնում առկա է ողջակիզման հիշատակն հավերժացնող մի հուշակոթող: Հայոց ցեղասպանությունը հիշեցնող մման մի հուշակոթող էլ կցանկանալինք, որ Երուսաղեմում լինել: Լավ կլինի, որ Ֆրիզը և Վուրմլին զբաղվեն Գերմանիայում՝ հենց իրենց արիական քթի տակ տեղի ունեցող հակասեմիթական խժոժությունների խնդրով:

• Ո՛չ հայերը և ո՛չ էլ հրեաները չեն պահանջում կոտորված ազգականների դիմաց դրամական փոխհատուցում՝ որպես եկամտի աղբյուր, ինչպես հեղինակներն են պնդում: Ով կարծում է, թե Եվրոպայի 6 միլիոն սպանված հրեաների և Փոքրասիայի և Արևմտյան Հայաստանի 5 միլիոնից ավել սպանված քրիստոնյաների (հույներ, հայեր, ասորիներ, քրիստոնյա արաբներ) թափված անմեղ արյունը կփոխհատուցվի մի քանի միլիոն ամերիկյան դոլլարով՝ չարաչար սխալվում է: Թե՛ հայերը և թե՛ հրեաները պահանջում են երկու ոճրագործ պետություններից՝ Թուրքիայից և Նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայից այն, ինչ նրանք գողացել են այդ ժողովուրդներից:

Որպես ամփոփում նշենք. «Կովկաս, մշակութային ցնցում» գրքույկը եվրոկենտրոն դիրքերից գրված, նախապաշարված մի գրքույկ է: Աստված հեռու պահի հայերին այս տեսակ գրքերից և հեղինակներից:

ԺԻՐԱՅՐ ՔՈՉԱՐՅԱՆ